



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի պահանջներով,
հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության առաջարկությունը,
ի գիտություն ընդունելով ստորև նշված փաստաբանների համաձայնությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային ուղղությունների մասին առաջարկություն ներկայացնելու նպատակով ձևավորել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

- 1) **Արմեն Լևոնի Ասատրյան** (փաստաբան, աշխատանքային խմբի համակարգող, արտոնագիր N 1374).
- 2) **Գարիկ Հախնազարյան** (փաստաբան, արտոնագիր N 2500).
- 3) **Արաքս Վարդանյան** (փաստաբան, արտոնագիր N 2050).
- 4) **Կարեն Հակոբյան** (փաստաբան, ի.գ.թ, արտոնագիր N 2783).
- 5) **Մհեր Հակոբյան** (փաստաբան, ի.գ.թ., արտոնագիր N 1205):

2. Աշխատանքային խմբին առաջարկել ուսումնասիրել Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի նիստերում քննարկված հայեցակարգային մոտեցումների առնչությամբ կազմված նախագիծը և ներկայացնել առաջարկություն:

3. Սույն որոշման մասին իրազեկել աշխատանքային խմբի անդամներին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

2 սեպտեմբերի 2021թ.

թիվ 211-Ա

ք. Երևան